

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ՈՒՍՈՒՅՈՒՄԸ ՈՐՊԷՍ ՄԻՋՈՅ ԶԱՐԳԱՅՆԵԼՈՒ ԻՆՔՆՈՒՐՈՑՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ.

Ամենագիտար խնդիրներից մէկն անշուշտ սկզբնական ուսուցման գործն է, որ անընդհատ զբաղեցրել է մանկավարժներին և շարունակում է զբաղեցնել: Սա մի այնպիսի բարդ և միևնույն ժամանակ փափուկ գործ է, որից՝ առանց կոշումն ունենալու, առանց հոգւով ու սրտով նուիրուելու, անկարելի է իրական յաջողութիւն ձեռք բերել և մանուկ սերունդի դեռահաս սրտերում բարւոյ ու առաքինութեան սերմեր ցանել: Այստեղ մանկավարժ ուսուցիչը գործ ունի բանական արարածների հետ և պէտք է իւր բոլոր ջանքը թափէ նրանց այնպէս առաջնորդելու, այնպիսի մտաւոր պաշար մատակարարելու, որ մանուկները ժամանակին լինեն հասարակութեան պիտանի անդամներ, ուղիղ և ճշմարիտ ճանապարհով ընթանան: Բայց սրտեղից և ինչպէս սկսել գործը: Ահա այստեղ վարանում է իւրաքանչիւր անձնուէր դասատու, երբ տեսնում է իւր առաջ ամեն դասակարգի և ամեն աստիճանի մանուկներ, ժողովուած թէ մարդաշատ և թէ խուլ անկիւններից, աղքատ և հարուստ մտաւոր պաշարով: Կարելի է առանց չափազանցութեան ասել, թէ որքան մանուկ՝ այնքան և տարբեր մտապատկերներ, այնքան և տարբեր պատրաստութիւն դպրոցական ուսուցման սկզբնաւորութեան համար, որ և մտածելու առիթ է տալիս, թէ ուսուցիչը ինչի՞ վերայ հիմնէ իւր ապագայ աւանդելիքը: Մանուկն այստեղ զատուած է իւր հայրենական բնակավայրից, իւր ծանօթ առարկաներից՝ իրան մի նոր շրջապատի մէջ է գտնում. ահա այստեղ է հարկաւոր իսկական մանկավարժը, որ կարողանայ մանկանց ունեցած պաշարի հիման վերայ սկզբնական ուսուցումը պատուաստել և ցոյց տալ, թէ դպրոցը ոչ այլ ինչ է, բայց եթէ իւր հայրենական շրջանի շարունակութիւնը, միայն աւելի կանոնաւոր և աւելի կազմակերպած:

Դժբախտաբար համարեա ամենայն տարի նոյն երեւոյթն է կրկնուում մեր դպրոցական հաստատութիւններէ մի քանիսի մէջ, ուր ընդունում են դեռ գրել-կարդալ չիմացող մանուկներին, բայց միշտ անուշադրութեան է մատնուում այն խնդիրը, թէ սրտեղից պիտի սկսել ուսուցումը. այստեղ իւրաքանչիւր թէ փորձուած և թէ անփորձ դասատուի կամքին է թողնուում պարապել նորեկների հետ այնպէս, ինչպէս ինքն է հասկանում՝ անցնել այն, ինչ որ ինքը նպատակայարմար է ճանաչում: Այս է գլխաւոր պատճառն ահա, որ դպրոցը չի հասնում իւր նպատակին, որ այդպիսի մանուկներից կեանքի մէջ գուրս են գալիս ինքնուրոյն գործունէութեան անընդունակ և բոլորովին անպատրաստ մարդիկ: Մանկավարժութեան առաջին և գլխաւոր պահանջներից մէկն այն է, որ դպրոցական ուսուցումը հիմնուի մանկան ունեցած մտաւոր պաշարի վերայ, որ առաջ բերուեն նորա ժողոված մտապատկերները, կարգի ու կանոնի տակ դրուեն, և այդպիսով միջոց տան մանկան զարգացնելու իւր մէջ գիտակցական գործունէութիւն:

Այս բոլորը ուսուցիչն առաջ պիտի տանէ այնպիսի աշխուժութեամբ, այնպիսի եռանդով, որ աշակերտի մէջ հետաքրքրութիւն չարժէ՝ գրաւէ նրան. առանց հետաքրքրելու և գրաւելու ոչինչ կը լինին այն բոլոր նեղութիւններն ու չարչարանքը, որ ուսուցիչը յանձն կառնէ: Բայց ինչով կարելի է հետաքրքրութիւն չարժել, ինչ միջոցով կարելի է միշտ թարմ պահել աշակերտի միտքը, որ նա ըմբռնէ ուսուցչի աւանդածը. սորա միակ պոյմանն է խօսել աշակերտների հետ այնպիսի առարկաների մասին, որոնք արդէն ծանօթ են, որ դիտել կարող են, և որոնց մասին նոքա արդէն ունին մտապատկերներ, թէև ոչ դասաւորած և ոչ կանոնի տակ դրած: Իսկ այս վերջին նպատակին հասնելու միջոցը հայրենագիտութիւնն է, որը միակ և գլխաւոր օգնականը կարող է լինել ուսուցչի համար հիմնելու ապագայ ուսուցումը: Մեր դպրոցներից շատերում հայրենագիտութիւնը երեսի վերայ

է թողած. սորա վերայ նայում են իբրև ոչ անհրաժեշտ և ոչ էլ կարևոր մի առարկայի վերայ, այլ ուսուցչի ցանկութեան է մնում հայրենագիտութիւն ասելով հասկանալ այն, ինչ ինքն է ուզում, և անցնել այնպէս, ինչպէս այդ յարմար է ճանաչում ինքը: Մի քանի դըպրոցներում այդ առարկան միմիայն անունով գոյութիւն ունի և սկզբնական ուսուցումը սկսուում է ուղղակի նորանից, որ ուսուցիչը, դասերը սովորեցնելուց յետոյ, տալիս է դասագիրքը աշակերտների ձեռքը, և նոքա սկսում են կարգալ ուսուցչի ղեկավարութեամբ, մեծ մասամբ առանց կարգացած իւրացնելու: Մինչև իսկ պատահել են դէպքեր, որ մի դպրոցի նախակրթարանի համար նշանակուել է դասատու նորաւարտին մէկը, և վերջինս չիմանալով հրտեղից և ինչպէս սկսել ուսուցումը, դադարաւ չունենալով ոչ հայրենագիտութեան և ոչ էլ մանկավարժութեան տարրական կանոնների մասին, նոյն իսկ առաջին ժամից որ և է մի կենդանու անուն տալով ամբողջ դասարանին կրկնել է տուել անդադար, ինքն էլ չիմանալով, թէ ինչո՞ւ այդ կենդանու անունը պիտի սովորեցնել. իսկ աշակերտները չեն հասկացել հարկաւ, թէ ի՞նչ է ուզում ուսուցիչը իրանցից: Այդ ուսուցումը եղել է բթացուցիչ, անմիտ և անբովանդակ և մանուկների համար ժամերը կորել են բոլորովին անօգուտ: Որպէս զի կարողանանք ազատ լինել այսպիսի թիւրիմացութիւններից և հասկանալի եղանակով սկսել սկզբնական ուսուցումը, մենք այստեղ քաղուածօրէն առաջ կը բերենք գերմ. յայտնի մանկավարժ Օտտօ Շտէյների գեղեցիկ և օգտակար յօդուածը*) նորեկ և անգրագէտ աշակերտների մասին, թէ ի՞նչ եղանակով կարելի է դարգացնել մանկանց ինքնուրոյն գործունէութիւնը:

Իւրաքանչիւր անհատի կամք սկիզբն է առնում մտքի աշխարհից, որի համար իբրև աղբիւր ծառայում է փո-

*) Այս մասը քաղուածօրէն առաջ ենք բերում „Вѣстникъ Воспитанія“ ամս. լց, 1896 թ. № 3:

խաղարձաբար լաւ կապակցուած զգալաւորներն ամբողջ շրջանը՝ զանազան մարդկանց մօտ զանազան աստիճանի, հետեւապէս և ամեն մի ուսուցիչ, որ նպատակ է դնում գաստիարակել իրան յանձնած սաներին, պէտք է նոցա մտաւոր աշխարհայեցողութիւնը այնպէս պատրաստէ, որ դա աղբիւր լինի լաւ կազմակերպուած կամքի։ Բայց ինքը գաստատուութիւնը, քանի սահմանափակուում է միայն աշակերտների դատ դատ մտքերի, այլ և բոլորովին պարզ գաղափարների զարգացմամբ, — դեռ ևս չէ կարող ներգործել այս եղանակով, այսինքն չէ կարող լինել կամքի աղբիւր։ Այստեղից յառաջանում է հարց՝ ինչպէս տանել գաստատուութիւնը, որպէս զի մշակելով որոշ մտաւոր աշխարհայեցողութիւններ, կարողանանք գաստիարակութեան միջոցով կազմակերպել կամքը։ Հերբարտեան գալլոցի մանկավարժների կարծիքով, աշակերտների մէջ բազմակողմանի և զօրեղ հետաքրքրութիւն զարթեցնելը կազմում է գաստիարակութեան իսկական նպատակը, որը և կամքը զարգացնելու ու կազմակերպելու գործում մեծ դեր է խաղում։

Տեսնենք այժմ, թէ երբ ծագում է այդպիսի հետաքրքրութիւն, ինչ ընթացք է ստանում։ Ամեն մի նոր ձեռք բերած հասկացողութիւն ոչ այլ ինչ է, բայց եթէ «նոր տպաւորութիւնների միացումը նման մտապատկերների այն շարքին, որն արդէն գոյութիւն ունի մանկան հոգեկան աշխարհում», սոցա յաջող իւրացումը գլխաւորապէս կախումն ունի նորա ունեցած մտապատկերների բնաւորութիւնից։ Եթէ նոր տպաւորութիւնները գտնում են նորա ունեցած մտապատկերների մէջ համապատասխան ու պարզ գաղափարներ, այն ժամանակ իւրացումը կատարուում է արագութեամբ և աշակերտը լարուած ուշադրութեամբ է վերաբերուում գաստատուութեան, իսկ եթէ նոր գաստատուութիւնը, հասնելով աշակերտի գիտակցութեան, այնտեղ պատահում է մոլթ գաղափարների, այն ժամանակ իւրացումը թոյլ է առաջ դնում՝ «չը շարժելով ոչ միտքը և ոչ սիրտը»։

Տպաւորութիւնների արագ իւրացման հետ զուգընթաց առաջ է գնում և մտքի կենդանի դործունէութիւնը, որից ծագում են աշակերտի համար և՛ բաւականութեան և՛ ուրախութեան զգացում, և ցանկութիւն նոյնը կրկնելու երբ աշակերտը իւր հոգու մէջ դարձած որ և է ցանկութիւն ուզում է կատարել, այն ժամանակ նորա մէջ սկիզբ է առնում ինքնագործութեան ձգտումը, որի զարգացնելն ու կատարելագործելը ամեն մի բարեխիղճ դասատուի ամենամեծ պարտականութիւններէ մէկը պէտք է լինի։ Ուսուցիչը երբէք չպիտի մոռանայ, որ իւրաքանչիւր աշակերտի ինքնագործութեան մէջ վարժեցնելու և կամ իւր ամէն մի պատմածը նորա մտքի մէջ լաւ տպաւորելու առաջին պայմանը հետաքրքրութիւնն է, եթէ նորան յաջողութեամբ է շարժել այդ հետաքրքրութիւնը աշակերտների հոգու խորքում, այն ժամանակ շատ շուտով հանդէս են գալիս խոհեմ դասատուութեան հետքերը. այնուհետեւ առանց որ և է արտաքին դրդման, ինքնաբերաբար, նոքա ձգտում են ընդարձակելու իրանց ունեցած հասկացողութիւնները։ Ահա այս հոգեկան դրութիւնը, որ ամբողջապէս դրաւում է աշակերտին՝ է այն, որը սովորաբար անուանում են հետաքրքրութիւն։ Ֆիխտէի կարծիքով դասատուութեան անյաջողութիւնը ծագում է նորանից, որ ուսուցիչը չի կարողանում աշակերտների մէջ հետաքրքրութիւն դարձեցնել, որոնք հակառակ դէպքում ուրախութեամբ կը սովորէին։ «Հետաքրքրութիւնը, ասում է նա, ինքնագործունէութիւն է»։ Դաստիարակելով աշակերտների ինքնագործունէութիւնը՝ մենք անմիջապէս օգնում ենք հասնելու և մեր որոշած վերջնական նպատակին, որովհետեւ ինքնագործունէութեան զարգացմամբ զարդանում է և ինքնուրոյն դասողութիւնը։

Մարդկանց միտքը հարստացնող մտապատկերները յառաջանում են երկու գլխաւոր աղբիւրից՝ նոր տպաւորութիւններ անմիջապէս ընդունելուց և մտածողութեան օգնութեամբ նրանց իւրացնելուց. հետեւանքն այն է լի-

նում, որ աշակերտը ծանօթանում է առարկաների հետ և քիչ թէ շատ կենդանի հետաքրքրութիւն է առաջ դառնալիս նրանց համար: Այդ հետաքրքրութիւնը կարող է ուղղուած լինել առարկաներն աւելի լաւ դիտելու, լաւ զննելու՝ կամ թէ նրանց վերլուծելու ու ժողոված հասկացողութիւնները ընդհանրացնելու կողմը: Դաստիարակութեան համար հետաքրքրութեան բարձր նշանակութիւնն այն է, որ աշակերտը կարողանայ ինքնուրոյն կերպով դիտել և այդ ձևով ստացած մտապատկերները համեմատել: Պէտք է սովորեցնել, վարժեցնել աշակերտներին դիտելու, և լաւ դիտելու, իսկ դիտողականութեան համար հարկաւոր են զննական միջոցներ, և ոչ թէ վերացական խօսքեր: Դիտողականութիւնը օգնում է աշակերտին իւրացրած տպաւորութիւնները վերարտադրելու. նա դիտողի մէջ ինքնագործունէութիւն է ծնեցնում, և սորա հետևանքն այն է լինում, որ նա պարզ հասկացողութիւններ է կազմում, որովհետև ուշադրութեան աստիճանից կախուած է նաև մտապատկերների աւելի կամ քիչ չափով պարզ ըմբռնելը:

Արդեօք ուսումնարան մանող մանուկը ունենում է այդպիսի պարզ մտապատկերներ, որոնք իբրև նիւթ ծառայէին դասատուի համար: Արտաքին աշխարհը հազարաւոր զանազանակերպ տպաւորութիւններով գրաւում է մանկան հոգին, առաջ է բերում նորա մէջ համապատասխան զգայութիւններ և մտապատկերներ. նորա ամբողջ հոգեկան կեանքը սկսւում է զգայութիւններից, որոնք իւրացուցման առաջին աստիճանն են ներկայացնում: Շնորհիւ այն հանգամանքի, որ մանուկը շատ հեշտութեամբ է ընդունում տպաւորութիւնները, նորա հոգին հարստանում է հայրենի բնութիւնից և շրջապատի մարդկանցից ստացած մտապատկերներով, որոնք յաճախակի կրկնուելուց աւելի պարզւում և աւելի որոշուում են, մնալով նորա հոգեկան աշխարհում, որտեղից նա կարող է ամէն ժամանակ օգտուել՝ իւր միտքը արտայայտելու և կամ նոր իւրացուցումներ կատարելու գործում: Բայց մի

այլ կողմից իբրև ընդունուած ընդհանուր փաստ է ներկայանում և այն հանգամանքը, թէ բոլոր մտապատկերները, որոնք ձեռք են բերուած մանկան անձնական փորձով ունին շատ պակասութիւններ, մանուկը ինքնաբերաբար իւր ուշադրութիւնը դարձնում է յաճախ այնպիսի առարկաների վերայ, որոնք գրաւում են նորան իրանց դոյնով ու ձեով, երբեմն էլ այլ պատահական յատկութիւններով, որոնց հիման վերայ նա առարկաների մասին ընդհանուր հասկացողութիւն է կազմում: Այսպիսի դէպքում չի կարելի ի հարկէ սպասել, որ ըմբռնած հասկացողութիւնները լինեն պարզ և ճիշտ. դժուար է նրանց մէջ դասաւորութիւն կամ կարգ գտնել, որովհետեւ նրանց միացնելը և փոխադարձաբար կապելը պատահական կերպով է տեղի ունենում: Բայց ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ պարզ մտապատկերները ահագին նշանակութիւն ունին մանկան հոգեկան աշխարհի համար, որ հայրենական երկրի շրջապատը հանդիսանում է իբրև ամենազօրեղ միջոցը կանոնաւոր դաստիարակութեան համար՝ անհրաժեշտ է միշտ հոգս տանել ծանօթ մտապատկերներով հարըստացնելու նորա միտքը և աշխատել, որ դռբա լինին պարզ, կատարեալ, ճիշտ և ըմբռնման համապատասխան: Իմաստալից և որոշ հասկացողութիւնները ձեռք են բերուում միայն լարուած մտաւոր դործունէութեամբ և շրջապատող առարկաներն ու երևոյթները լաւ գիտելով. ուրեմն և նախնական ուսուցման առաջին խնդիրը պէտք է լինի մանկան միտքը պատրաստել՝ ուշադրութեամբ գիտելու առարկաներն, և նորան ընդունակ դարձնել ապագայ դարգացողութեան:

«Ձի կարելի ուսուցանել այն մանկանց, որոնք ոչինչ չեն տեսել», ասում է Հերբարտը: Ուսուցման համար մանկան միտքը պատրաստելու իբրև ամենալաւ միջոց նա առաջարկում է հայրենագիտութեան զննական ուսուցումը, այս դէպքում նա խորհուրդ է տալիս դիմել մանկան հայրենագիտութեան վերաբերեալ արդէն ունեցած տեղեկութիւններին, վերլուծել դոցա, լրացնել

պարզ տեղեկութիւններով և որոշ կարգ ու կանոնի տակ գնել։ Այս ժամանակ ամէն մի նոր ծագող միջոց անմիջապէս առաջ կը բերէ նոյնանման նոր հասկացողութիւն, որովհետեւ մանուկը միտքը կենտրոնացնելով առարկայի և նորա մասերի վերայ՝ պէտք է «դիտէ» և հետեւապէս ինքնուրոյն կերպով ձեռք բերէ նորա մասին նոր տեղեկութիւններ։ Արդէն Ամոնիուս կամենացին պահանջում էր, որ ուսուցումը սկսուի իրականից—առարկաների դիտողութիւնից, միայն այս ճանապարհն է տանում դէպի ճշմարիտ հասկացողութիւնը, որովհետեւ «երբ մարդ ձգտում է հասկանալու բնութիւնը, որի մէջ նա ապրում է, միայն մի միջոց կայ—հոգեկան ոյժերը լարել առարկաները ուշադրութեամբ դիտելու համար՝ փորձերի և համեմատութեան միջոցով»։ Համեմատութիւնը միացնում է համանման մտապատկերները, բաժանում միւսները, սովորեցնում է ձևերի, չափերի և թուի նշանակութիւնը ըմբռնելու, և այս բոլորին օգնում է մտապատկերների կանոնաւոր դասաւորութիւնը։ Այս պատճառով էլ հայրենագիտութեան ուսուցման ժամանակ դիտողութիւնն ու համեմատութիւնը ամենակարեւոր գերն են խաղում։ Այն ուսուցիչը, որը կարողանում է աշակերտներին առաջնորդել այս ճանապարհով և զարթեցնում է նոցա մէջ հայրենագիտութեան վերաբերեալ հասկացողութիւններ ըմբռնելու ձգտումն, կարող է համոզուած լինել, որ ինքն արել է շատ բան, ընթացել է ուղիղ, որովհետեւ ապագայ ամբողջ դասատուութեան խնդիրը նորանում է, որ աշակերտը կարողանայ գաղափար կազմել օտար և հեռու առարկաների մասին՝ հայրենական շրջանից արդէն ձեռք բերած հասկացողութիւնների միջոցով։

Այս ասածները մեծ նշանակութիւն ունին նաև աշխարհագրութեան դասատուութեան համար։ Այս դիտութիւնը, որը ծանօթացնում է մարդկանց իրանց բնակավայրի հետ, բացատրում է մեզ, թէ ինչ յարաբերութիւն ունի այդ բնակավայրը ամբողջ աշխարհի հետ, ինչպէս Ռիտտէրն է ասում. դորա նպատակը պէտք է լինի երկրի և նորա

ընակիչների փոխադարձ յարաբերութեան բացատրութիւնը: Յայտնի է, որ աշխարհագրութեան օգտակար ուսուցումը պահանջում է աշակերտից երևակայութեան ուժեղ դործունէութիւն: Որպէս զի զննական կերպով բացատրենք այն բոլորը, ինչ որ մեր անձնական փորձից դուրս է գտնուում՝ ծառայում են, ճշմարիտ է, աշխարհաբանները, նկարները և վերջապէս մեր խօսքերը, բայց «մեր երևակայութիւնը պէտք է իւր համար նկարէ քարտէզներ, իսկ խօսքերը նկարեն համապատասխան առարկաներ»: Եթէ Հումբոլտի հետ ընդունենք, որ «հողի ամէն մի անկիւնը արտացոլում է իւր մէջ ամբողջը, այն ժամանակ պարզ կը լինի, որ հայրենի շրջանից վերցրած մտապատկերները կարող են ծառայել իբրև մտաւոր պաշար երևակայութեան դործունէութեան համար: Հայրենագիտութեան կանոնաւոր դասատուութիւնից է կախուած նաև աշխարհագրութեան յաջող դասատուութիւնը. յաջողութիւնն այնքան աւելի կը լինի, որքան աւելի մտապատկերներ ունի աշակերտը իւր հայրենի. բնութիւնից վերցրած: Ժ. Ժ. Բուսոյի մի անգնահատելի ծառայութիւնն այն է, որ պարզ որոշում է աշխարհագրութեան դասատուութեան վերջնական կէտը. «Էմիլի» Գ. գլխում հետևեալ խօսքերն է նա ասում. «Աշխարհագրութեան ուսուցման երկու գլխաւոր կենտրոններ կան. ա) այն քաղաքը, ուր սովորում է աշակերտը, և բ) իւր հայրենի դաւառական տունը, ուր մեծացել է և մտաւոր պաշար ժողովել:

Հայրենագիտութեան դասատուութեան էութիւնից հետևում է այն, որ նա իսկապէս ոչ այլ ինչ է, եթէ ոչ զննական ուսուցումն: Սորանից սկիզբ է առնում դպրոցական զբօսանքի անհրաժեշտութիւնը, որի ընթացքում աշակերտները կարողանում են ուսուցչի ձեռնտուութեամբ անմիջապէս աշխարհագրութեան մէջ անցնուող առարկաների և նրանց յարաբերութեան մասին գաղափար կազմել: Միայն դործի կանոնաւոր կերպով առաջ տանելը կարող է գրաւել աշակերտներին, որ նոքա խելացի վե-

րաբերուեն իրանց հայրենիքի բնութիւնը ճանաչելով, և սիրով ու ջերմ գգացմամբ կատարեն այդ զբօսանքները հայրենի գաշտերում, որոնք մի քանի տարի շարունակ վկայ են եղել մեր անհոգ ու երջանիկ օրերին»։ Այո, շատ մանուկների համար, մանաւանդ գործարաններ ունեցող տեղերում, այդ զբօսանքները միակ միջոցն են ժամանակ առ ժամանակ լեռները բարձրանալու, աղբիւրներ որոնելու, ուրախ հոգւով և բաց սրտով գաշտերից, մարգագետիններից և անտառներից անցնելու։

Դպրոցական զբօսանքները պէտք է խելացի կերպով կազմակերպել և անհրաժեշտ դարձնել. իւրաքանչիւր զբօսանքից առաջ հարկաւոր է դասարանում ամէն նախապատրաստական աշխատանք վերջացնել։ Այստեղ ուսուցիչը հարցերի միջոցով իմանում է, թէ աշակերտների ինքնագիտակցութեան մէջ որքան պաշար կայ՝ զբօսանքի համապատասխան նպատակից օգտուելու համար։ Նախնական այս ծանօթութիւնը պէտք է լինի կարճ և սեղմ. եթէ զբօսանքի նպատակն է, որ աշակերտները գաղափար կազմեն մօտակայ բլրի մասին, ուսուցիչը կարող է օգտուել այն բոլոր առարկաներով, որոնք գտնուում են բլրի ճանապարհին կամ շրջապատում։ Ճանապարհի նկատմամբ բուական է նոցա հասկացնել այնքան, որ կարողանան գաղափար կազմել նորա չափի և տարածութեան մասին։ Բլրի բարձունքից նայելով անցած ճանապարհին՝ ուսուցիչը աշխատում է ամրացնել աշակերտի գիտակցութեան մէջ տարածութեան վերաբերեալ արդէն ձեռք բերած մտապատկերները, և յետոյ արդէն անցնում է երկրի այլ մասերին. իսկ բլրի մասին բացատրութիւնը սկսուում է գագաթից, ապա գալիս են լանջեր, հարթութիւն, հովիտ և այլն։ Այսպիսով ձեռք բերած մտապատկերներին աշակերտները միանգամ ևս դառնում են կամ զբօսանքից վերադառնալիս և կամ վերադառնալուց յետոյ։ Տեսած առարկաներից ամենակարևորները կտրելի է ներկայացնել կամ աւաղի կոյտի օգնութեամբ, կամ դասարանական գրատախտակի վերայ։ Միւս կողմից պատերին

կախած տեսարանները կարող են դասատուին օգնել, և այսպիսով կարելի կը լինի դադարաւոր կազմել տալ նոցա աշխարհագրական քարտէզի մասին: Եթէ այսպէս առաջնորդեն ուսուցիչները աշակերտներին, այնուհետեւ դժուար չի լինի սոցա համար բնութեւնը և երեւոյթները ուրիշ երկրներէ մակերեւոյթը՝ քարտէզներէ օգնութեամբ: Զբօսանքների ժամանակ դիտողութիւնը գլխաւորապէս պիտի կենտրոնացնել հայրենի երկրի մակերեւոյթի կազմութեան, հողի յատկութեան, տեղագրութեան և նորա բաժանման, կլիմայի, բնակիչների պարապմունքների և վերջապէս իւրանց հայրենի երկնքի երեւոյթների վերայ: Դասատուի հմտութիւնը այս դէպքում պիտի երևայ նորանից, որ կարողանայ աշակերտների զանազան առարկաներից ստացած հասարակ տպաւորութիւնները դարձնել պարզ հասկացողութիւններ. սորա համար դասատուն օգտուում է դիտողականութիւնից և համեմատութիւնից:

Այժմ դառնանք բնական պատմութեան և տեսնենք սորա ուսուցումն ինչ օգուտ կարող է տալ:

Նախնական ժամանակ դիտութեան նպատակն էր բնական մարմինները նկարագրել և դասակարգելի վերածել, շատ շատերը պահանջում էին, որ մանուկները բնութիւնը անմիջապէս դիտեն, ինչպէս առաջին և անհրաժեշտ պայման նոցա դիտութեան. երբ արդէն բոլորն էլ համոզուեցան, որ բնական պատմութեան ուսուցման նպատակը պէտք է լինի «վարժեցնել մանկանց առարկաներն ու երեւոյթները ուշագրութեամբ դիտելու և խելացի կերպով ուսումնասիրելու»՝ բնութեան անմիջական դիտողութիւնը դարձաւ միևնոյն ժամանակ և միջոց և նպատակ բնական-ուսումնական դասատուութեան: Իսկապէս ինքը բնական պատմութիւնն անմիջապէս հանդիսանում է իբրեւ ամենահարուստ աղբիւր հետաքրքրութեան և ճանաչողութեան համար: Ուսուցումը, որի նպատակն է հաստատուն ներքին կապ հաստատել մանկան հոգեկան աշխարհի և բնութեան մէջ, կարող է օգնել և աւելի բարձր նպատակների հասնելու, զարթեցնելով մանկան

մէջ հասկացողութիւն Աստուծոյ մասին:

Թէ ինչպէս, զարթեցնելով և դաստիարակելով հետաքրքրութիւնը՝ կարելի է հասնել բնական կեանքի դիտակցութեանը իւր ամբողջութեամբ, ցոյց կը տայ հետեւեալը: Մենք արդէն ասացինք, որ բնութիւնն ուսումնասիրելու իբրև գլխաւոր հիմք ծառայում է դիտողութիւնը. բայց որպէս զի դիտողութիւնը խելացի լինի, անհրաժեշտ է, որ աչքը սովորէ տարբերութիւն տեսնելու առարկաների արտաքին ձևերի և ընդհանուր տեսքի մէջ, հետեւապէս անհրաժեշտ են հիմնական ըմբռնումներ: Որպէս զի կարողանանք վարժեցնել աշակերտների տեսողութիւնը, հարկաւոր է տեսանելի առարկաների նկարագրութիւնը: Ամէնից առաջ պիտի նկարագրել տալ բոյսերը, որովհետև նրանց գործարանները հասարակ կազմութիւն ունին, և այնպիսի բոյսեր պիտի վերցնել, որ աշակերտներին լաւ ծանօթ լինին, պարզ ձև ունենան և գործարաններն իսկոյն աչքի ընկնեն: Պիտի նկարագրել բոյսերը, երբ նոքա ծաղկած են արդէն, որովհետև այս շրջանում միայն դոքա գրաւում են մանկանց ուշադրութիւնը: Այստեղ ուսուցչի դերը առաջնորդողի դեր պիտի լինի միայն, իսկ նոր հասկացողութիւններն ու բացատրութիւնները պիտի աչքի ընկնեն իրենց կատարեալ պարզութեամբ. նկարագրելիք առարկան լաւ տպաւորելու համար պէտք է ուսուցիչը սովորեցնէ նաև նորա նկարելը: Այսպէս, մասնաւոր հասկացողութիւններ կազմելով առարկայի մասին, յետոյ միացնում են նոյն առարկայի նկատմամբ եղած ուրիշ տեղեկութիւնների հետ և մի կանոնաւոր դադափար տալիս:

Բայց ուսուցումը դեռ չի հասնում իւր նպատակին՝ նկարագրելով և համեմատելով առարկաների ձևերը՝ կեանքը և բնական մարմինների զարգացումը կարելի է դիտել միայն այնտեղ, ուր իրօք կեանք կայ, այսինքն հէնց բնութեան մէջ. «ուսուցէք աշակերտներին բաց օդի մէջ», ահա մի կարևոր պահանջ: Աղատ օդի մէջ կարելի է դիտել առարկաները տարուայ զանազան ժամանակներում, կարելի է տեսնել նոցա ծագումը և նոցա կեանքի ընթացքը,

տեսնել թէ ինչպէս բացուում են կոկոնները, դուրս գալիս տերեւները, երևում ծաղիկները, թէ ինչպէս է կազմուում, հասունանում և վայր ընկնում պտուղը: Միայն բաց օդի մէջ կարելի է զննական կերպով հետեւել բոյսի աճողութեանը և բնական ամբողջ պատմութեանը, այդ տեղ մեր ուշադրութիւնն ակամայից դարձնում ենք բոյսի տեղի վերայ, նկատում ենք նորա կախումը կենդանական աշխարհից, բնութեան ոյժերի՝ ինչպէս լոյսի, տաքութեան, քամու ևլն. ազդեցութիւնը բուսական գործարանների վերայ: Բնական պատմութեան ուսումնասիրութիւնը յաջողութեամբ առաջ տանելու համար շատ օգտակար կարող են լինել լաւ կազմած և պատրաստած դպրոցական պարտէզները: Միայն սորա են միջոց տալիս աշակերտներին տարուայ ամէն եղանակին ուսումնասիրելու բնութիւնը հէնց բնութեան իւր կրճքում, ուշադրութեամբ հետեւելու սերմի աճեցողութիւնից մինչև պտղի հասնելը և դիտողութեան հետեւանքներն ուսուցչի ղեկավարութեամբ տեսրակ մտցնելու, որը յատուկ դորա համար պատրաստուած կը լինի: Այս դէպքում իւրաքանչիւր խումբ աշակերտների պիտի տալ ուսումնասիրելու զանազան տեսակի բոյսեր: Մի քանի ժամանակից յետոյ ուսուցիչը կարող է համոզուել, որ համարեա բոլոր աշակերտները ջանասիրութեամբ կատարում են իրանց գործը. նրանց համար մեծ ուրախութիւն է, երբ բաւական ժամանակ անցնելուց յետոյ գնում են դիտելու իրանց վերցրած բոյսի աճեցողութիւնը:

Բայց գալիս է ժամանակ, երբ դպրոցական պարտէզը այլ ևս բաւական չէ լինում և ուսուցումը պահանջում է աւելի ընդարձակ շրջան, հարկաւոր է լինում առանձին կրթական ճանապարհորդութիւնների կատարել, որպէս զի բնութիւնը բազմակողմանի կերպով ուսումնասիրելով նոր պաշար ժողովեն: Այս ժամանակ աշակերտները պէտք է վերցնեն իրանց սովորած բոյսերի տեսակները և ուսուցիչը սէր զարթեցնելով նոցա մէջ՝ պէտք է ուղիղ և ճշմարիտ ճանապարհով առաջնորդէ: Դիտողութիւնների հե-

տեանքն այն է լինում, որ տեղի է ունենում զրոյց աշակերտների և ուսուցչի մէջ այդ առարկաների վերաբերմամբ, որի նպատակն է բուսական գործարանների կեանքը, զարգացողութիւնը, ծաղկելը և թառամելը ցոյց տալ եղրակացութիւնները պէտք է լինեն իմաստալից և անսպասման ճշմարիտ, որովհետեւ առանց հիմնաւոր պատճառի ընդունած օրէնքը դատարկ և անմիտ օրէնք կը լինի, որը կարող է իրաւունք տալ աշակերտին կարծելու և երեւակայելու, թէ ինքը շատ բան գիտէ և կարող է ասպագայում ինքնուրոյն գործունէութեամբ առաջ գնալ։ Միայն բազմակողմանի դիտողութեամբ և հիմնաւոր համեմատութեամբ կարելի կը լինի երիտասարդ ուղեղների համար վերջնական եղրակացութիւն անել և որոշել օրէնքները, որպէս զի յետոյ այդ ընդհանրացման հիման վերայ կարողանան ուսումնասիրած երևոյթների պատճառները ճիշտ որոշել այն նպատակով, որ բոյսերի ամբողջ կեանքի մասին պարզ և ուղիղ գաղափար կազմեն։

Եւ այսպիսով տպաւորութիւնների ըմբռնումը, անգաղար դիտողութիւնը և ստացած մտապատկերների համեմատութիւնը—երևան են գալիս իւրեւ հոգեկան գործունէութեան ամենակարեւոր միջոցները, նոքա անմիջապէս օգնում են զարգացնելու ամէն տեսակ հետաքրքրութիւն՝ իմանալու նաեւ գեղեցիկը, գեղագիտական ճաշակ ունենալու, որի վերայ մինչև այժմ քիչ ուշադրութիւն էին դարձնում։ Բնական գոյների և դժագոյութիւնների հիասքանչ գեղեցիկութիւնը դաշտերում, և այլ տպաւորութիւններ՝ առաջ են բերում գեղագիտական զգացում, ուսուցիչը առիթ չը պիտի փախցնէ բացատրելու աշակերտներին այդ բոլորը և գորանով օգնէ զարգացնելու նրանց մէջ գեղագիտական ճաշակ, բայց պիտի խոյս տայ այս ասպարիզում որ և է եղրակացութիւն անելուց։

Եթէ այս եղանակով առաջ տարած դասատուութիւնը կարողանայ հետաքրքրութիւն զարթեցնել դէպի բնական կեանքը, դորանով մասնկան մտքի ինքնուրոյն գործունէութեան սկիզբը կը դրուի, սովորական ուսումնասի-

բութեան եղանակներից օգտուելով—գիտողութիւնից և համեմատութիւնից—աշակերտը իւր հայրենի բնութեան մէջ կը գտնէ նորանոր կողմեր ուսումնասիրելու և կանոնաւոր դասելու, և դա ընդմիշտ ամենագեղեցիկ և մաքուր ուրախութեան աղբիւր կը լինի նորա համար:

Ա. ԾԱԽ.



ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱԽՏԱՆԻՇՆԵՐ

Հայ ազգի քարոյական կեանքին վրայ տարօրինակ, վտանգաւոր ախտանիշներ երեւան կուգան: Այդ ախտանիշներ տարափոխիկ հիւանդութեան մը ծաւալումը կհաստատեն մեր ազգին վրայ դժբախտաբար: «Ո՛ւր կերթանք կոր», ի՞նչ պիտի ըլլայ այս ընթացքին վախճանը:

Անոնք որ առիթ ունեցած են ապրելու քուն հայերուն հետ, ներքին գաւառներու մէջ, ուր չէ՛ թափանցած միտքն ու սիրտը պէտք եղածին պէս լուսաւորող ճառագայթներ, իւր արհեստներ ու արուեստներ չեն օգնած մարդու աշխատանքը բեղմնաւորելու, իւր ամէն բան դեռ նախնական վիճակի մը մէջ է, եւ հայը չճանչնար իր ժամէն սլատարագէն դուրս կրօնական հորիզոն մը, այսչափ բաներն իսկ զրեթէ կորսնցուցած են իրենց նշանակութիւնը. վասն զի տնտեսագիտական սնանկ վիճակի մը ենթարկուած են, որ սոսքիւնր միակ եւ քացարձակ միջոց մ'ըրած են իրենց պաշտպանութեան համար: Հոգեբանական այս վիճակը վաղանցիկ երեւոյթ մը չէ՛ դժբախտաբար. իրենց հարստահարեալ կացութեան արդիւնքն է այդ, որ կտեսէ շատ հին ժամանակներէ ի վեր եւ մանաւանդ կէս դարէ ի վեր. եւ ընական է որժառանգական ախտ մը դառնայ սոսքիւնր, ցորչափ հարստահարութեան վիճակն ալ պահէ իր ժառանգական երեւոյթը:

Հայու ամէնէն կարեւոր մասերուն այս վիճակը պէտք էր որ խորունկ ուշադրութիւնը զրաւէր մանաւանդ անոնց, որ ազգին ճակատագրին հետ կզբաղին: Բայց դժբաղդաբար